ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2023 թվականի № 250-Ա

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նաիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի արտահիվանդանոցային ծառայության գծով տեղակալի՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ի № 183 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նաիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար ***Գևորգ Վարդանյանի*** ժամանակավոր անաշխատունակության պատճառով՝ ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության տնօրենի արտահիվանդանոցային ծառայության գծով տեղակալ ***Մելինե Ներսիսյանի*** վրա, մինչև տնօրենի պաշտոնակատարի աշխատանքի ներկայանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է *2023 թվականի օգոստոսի 24-ից* ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 06
ք. Հրազդան